ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի հունիսի 5-9-ը Լեհաստան/Կրակով/ կատարած գործուղման արդյունքների մասին

1.Անունը,ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Ստեփան Մնացականյան, ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Լեհաստանի Հանրապետություն (Կրակով), 2023թ. հունիսի 5-9-ը

3.Հրավիրող կողմը՝

Եվրամիության վիճակագրական ծառայություն (Եվրոստատ)

4.Գործուղման նպատակը՝

Մասնակցել «Եվրոպական վիճակագրական համակարգի որակի ստանդարտների՝ Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի և որակի ապահովման շրջանակի խթանում» խորագրով սեմինարին:

Սեմինարն ուղղված էր Ազգային վիճակագրական ինստիտուտների ներկայացուցիչներին Եվրոպական հարևանության քաղաքականության, Արևելյան և Կենտրոնական Ասիայի երկրներից՝ տրամադրելու խորը գիտելիքներ և ավելի լավ պատկերացում Եվրոպական վիճակագրական համակարգի որակի չափանիշների մասին: Սեմինարը ներկայացրեց Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի 16 սկզբունքների և 84 ցուցանիշների իմաստը և հիմնավորումը, ինչպես նաև դրանց իրականացման գործիքները, մեթոդները և գործելակերպը:

5.Քննարկված թեմաները՝

1.1. Եվրոպական վիճակագրական համակարգի վերջին զարգացումները, որոնք ազդում են որակի վրա

1.2. Եվրոպական վիճակագրական համակարգի Որակի ընդհանուր շրջանակ. Ներածություն

- Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգիրք
- Եվրոպական վիճակագրական համակարգի որակի ապահովման շրջանակ
- Որակի կառավարման ընդհանուր սկզբունքներ
  Քննարկումներ և հարցեր

1.3. Ինստիտուցիոնալ միջավայրի որակի բարձրացում (I)

- Պրոֆեսիոնալ անկախություն
- Անկողմնակալություն և օբյեկտիվություն
- Հայաստանի ազգային փորձը
  Քննարկումներ և հարցեր

1.4 Ինստիտուցիոնալ միջավայրի և վիճակագրական գործընթացների որակի բարձրացում (I)

- Մանդատ տվյալների հավաքման համար և տվյալների հասանելիություն
- Ռեսպոնդենտների ոչ ավելորդ ծանրաբեռնվածություն
- Ուկրաինայի ազգային փորձը
  Քննարկումներ և հարցեր

1.5. Ինստիտուցիոնալ միջավայրի որակի բարձրացում (I)

- Համակարգում և համագործակցություն
- Մոլդովայի ազգային փորձը
  Քննարկումներ և հարցեր

2.1. Ինստիտուցիոնալ միջավայրի և վիճակագրական արտադրանքի որակի բարելավում (I)

- Որակի հանձնառություն
- Ճշգրտություն և արժանահավատություն
- Ղրղզստանի ազգային փորձը
  Քննարկումներ և հարցեր

2.2. Վիճակագրական գործընթացների որակի բարձրացում

- Հիմնավորված մեթոդաբանություն
- Համապատասխան վիճակագրական ընթացակարգեր
- Վրաստանի ազգային փորձը
  Քննարկումներ և հարցեր

2.3. Ինստիտուցիոնալ միջավայրի և վիճակագրական գործընթացների որակի բարելավում (II)

- Ռեսուրսների համապատասխանություն
- Ծախսերի արդյունավետություն
- Ուզբեկստանի ազգային փորձը

Քննարկումներ և հարցեր

2.4. Ինստիտուցիոնալ միջավայրի որակի բարձրացում (III)

- Վիճակագրական գաղտնիություն
- Ղազախստանի ազգային փորձը

Քննարկումներ և հարցեր

3.1. Վիճակագրական արտադրանքի որակի ապահովում (I)

- Համապատասխանություն
- Մատչելիություն

Քննարկումներ և հարցեր

3.2. Վիճակագրական արտադրանքի որակի ապահովում (II).

- Յուրաժամանակություն և ճշտապահություն
- Համաձայնեցվածություն և համադրելիություն

Քննարկումներ և հարցեր

3.3. Որակի կառավարման այլ ասպեկտներ.

- Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի և Որակի ապահովման շրջանակի/ որակի կառավարման համակարգի ներդրման խնդիրները
- Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի իրականացման մշտադիտարկման ուղիները և լավ փորձառությունները (փորձագիտական գնահատումներ)
- Գնահատումներ ԵՀՔ-Արևելյան երկրներում

3.4. Եզրափակիչ քննարկում և գնահատում:

6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգիրքը Հայաստանի վիճակագրական համակարգի որակի ընդհանուր շրջանակի հիմքն է: Այն ինքնակարգավորվող գործիք է և հիմնված է 16 սկզբունքների վրա՝ ընդգրկելով ինստիտուցիոնալ միջավայրը, վիճակագրական գործընթացներն ու վիճակագրական արդյունքը:

«Ինստիտուցիոնալ միջավայրի որակի բարձրացում» խորագրով նստաշրջանին Հայաստանը ներկայացրեց «Պրոֆեսիոնալ անկախություն, անկողմնակալություն և օբյեկտիվություն. Հայաստանի ազգային փորձը» թեմայով շնորհանդես:

Մեջբերում՝ 2018թ. Եվրոստատի, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի և Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի փորձագետների կողմից Արմստատի և Հայաստանի պաշտոնական վիճակագրության փորձագիտական գնահատման հաշվետվությունից (https://www.armstat.am/file/doc/99517703.pdf).

Պրոֆեսիոնալ անկախություն. «Արմստատը 2018 թվականի մարտի 21-ից օրենքով վայելում է լիարժեք Պրոֆեսիոնալ անկախություն (Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի Սկզբունք 1):

Անաչառություն և օբյեկտիվություն. «Նույնպես, Անաչառություն ու օբյեկտիվություն սկզբունքը (Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի Սկզբունք 6) երաշխավորված է Օրենքում և ջանասիրաբար պահպանվում և կիրառվում է»:

7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Սեմինարը օգտակար էր Եվրոստատի ընդլայնման, հարևանության և զարգացման համագործակցության բաժնի կողմից ԵՀՔ-Արևելյան տարածաշրջանի վիճակագրական համակարգերի ապագա գնահատումների համար:

Հայաստանը ներկայացրեց իր հարուստ փորձն արտաքին փորձագետների կողմից իրականացված գնահատումների վերաբերյալ, որոնք կարևոր գործիք են հանդիսանում գնահատելու համապատասխանությունը Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքին, համակարգման դերը, ազգային վիճակագրական համակարգի ուժեղ և թույլ կողմերը և անհրաժեշտության դեպքում առաջարկելու բարելավման գործողություններ:

Արմստատում տեղի են ունեցել հետևյալ գնահատումները.

2014թ. Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի իրականացման թեթև փորձագիտական գնահատումը՝ Եվրոստատի փորձագետների կողմից (http://www.armstat.am/file/doc/99487953.pdf):

2014թ. Միգրացիայի վիճակագրության ոլորտային գնահատումը Հայաստանի Հանրապետությունում՝ Եվրոստատի փորձագետների կողմից (http://www.armstat.am/file/doc/99492303.pdf):

2016թ. Զբոսաշրջության վիճակագրության ոլորտային գնահատումը Հայաստանում՝ Եվրոստատի փորձագետների կողմից (https://www.armstat.am/file/doc/99501893.pdf):

2017թ. Հայաստանում Աշխատուժի հետազոտության ոլորտային գնահատումը՝ Եվրոստատի փորձագետների կողմից (https://www.armstat.am/file/doc/99507373.pdf):

2018թ. Արմստատի և Հայաստանի պաշտոնական վիճակագրության փորձագիտական գնահատումը՝ Եվրոստատի, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի և Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի փորձագետների կողմից (https://www.armstat.am/file/doc/99517703.pdf):

2019թ. Հայաստանում պաշտոնական վիճակագրության տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտային գնահատումը՝ ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (Իտալիայի վիճակագրություն, Սերբիայի վիճակագրություն) և Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի (Նորվեգիայի վիճակագրություն) փորձագետների կողմից (https://www.armstat.am/file/doc/99517668.pdf):

2022թ. Հայաստանի շրջակա միջավայրի վիճակագրության ոլորտային գնահատումը՝ Եվրոստատի փորձագետների կողմից (https://armstat.am/file/doc/99535193.pdf):

2022թ. Հայաստանում Վիճակագրական կազմակերպությունների ընդհանուր գործունեության մոդելի (GAMSO) ներդրման ոլորտային գնահատումը՝ ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի և Իտալիայի վիճակագրության ու Հունգարիայի վիճակագրության փորձագետների կողմից (https://armstat.am/file/doc/99533528.pdf):

Հայաստանը դիմեց խնդրանքով Եվրոստատին Արմստատի և Հայաստանի պաշտոնական վիճակագրության հաջորդ փորձագիտական գնահատումն անցկացնելու խնդրանքով:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Եվրոստատի ներկայացուցիչը տեղեկացրեց, որ պաշտոնական վիճակագրության փորձագիտական գնահատումների իրականացման համար նախատեսվում է 2023-2025թթ. ժամանակացույցը:

Մասնակցությունը սեմինարին հնարավորություն ընձեռեց ազգային վիճակագրական ծառայությունների ներկայացուցիչներին՝ ծանոթանալու վերջին զարգացումներին Եվրոպական Վիճակագրական Համակարգում, ուսումնասիրելու Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի սկզբունքների իրականացման

գործիքները և մեթոդները, կիսելու իրենց խնդիրներն ու փորձերը, քննարկելու գործողություններն ուղղված ազգային վիճակագրական համակարգերի որակի ստանդարտների կիրառման և որակի կառավարման հետագա կատարելագործմանը, ինչպես նաև ներկայացնելու պրոֆեսիոնալ անկախության, անկողմնակալության և օբյեկտիվության ապահովման Հայաստանի փորձը:

Սեմինարի ընթացքում ձեռք բերված գիտելիքների հենքով Արմստատը կշարունակի իր գործունեությունն ուղղված որակի կառավարման նոր գործիքակազմի ներդրմանը, ինչպես նաև մարտահրավերների հաղթահարմանը, ինչպիսիք են՝ ինտեգրված և համահունչ Ազգային Վիճակագրական Համակարգի ձևավորումը (հիմնական խոչընդոտը՝ պաշտոնական վիճակագրության այլ արտադրող դառնալու մոտիվացիայի բացակայությունը, այլ արտադրողների կարգավիճակը) և վիճակագրական նպատակների համար վարչական տվյալների օգտագործման ընդլայնումը:

Վարչական տվյալների արդյունավետ օգտագործումը կնպաստի հանրային վստահության ձևավորմանը տվյալների կառավարման և օգտագործման նկատմամբ:

Արմստատի համար վստահությունը չափազանց կարևոր է և այն պահանջում է պատշաճ օրենսդրություն և հիմնավոր ընթացակարգեր:

Վստահությունը գործընթաց է, ինչը խարսխված է տվյալների արտադրողների պրոֆեսիոնալ անկախության, բարձր պրոֆեսիոնալիզմի և գիտական սկզբունքների և տվյալների թափանցիկ հաղորդակցման վրա, որոնք ազգային վիճակագրական համակարգի նկատմամբ վստահություն ձևավորելու հիմնական տարրերն են:

9.Ստորագրությունը, ամսաթիվը՝

<< վիճակագրական կոմիտեի նախագահ Ստեփան Մնացականյան

13.06.23թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը - ՀՀ վիճակագրական կոմիտե

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը – Հայաստանի Հանրապետության Վարչապետի 08.05.23թ. թիվ 499-Ա որոշում

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

Ստեփան Մնացականյան – Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի նախագահ

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը - Լեհաստանի Հանրապետություն (Կրակով)

5. Գործուղման ժամկետները՝ 2023թ. հունիսի 5-9-ը

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը - Եվրամիության վիճակագրական ծառայություն (Եվրոստատ)

(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ

---

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☐ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը	Անուն, ազգանուն	Անուն, ազգանուն	Անուն, ազգանուն	Անուն, ազգանուն	Ընդամենը (հազ. դրամ)

		1	2	3	...	
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)					
	Ավիատոմսի արժեքը (դրամ)					
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)					
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)					
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար					
	Մուտքի արտոնագրի վճար					
	Այլ ծախսեր (նկարագրել)					
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)						

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը

Գլխավոր քարտուղար Ա.Հայրապետյան

13.06.23թ.